ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի «Հայոց լեզու և գրականություն»առարկայի (8դասաժամ),«Ես և շրջակա աշխարհը»(4 դասաժամ)ուսուցիչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի մշակած հարցաշարի՝ հաստատության կողմից պատահական ընտրությամբ կազմված 50 հարցից բաղկացած թեստի միջոցով: Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

_ դիմում (Ձև 1) մեկ լուսանկար 3 X 4 չափի

_ բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
սպայական կոչումն հավաստող փաստաթուղթ

_ անձը հաստատող փաստաթուղթ

_ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 – ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում)

_ ինքնակենսագրություն (Ձև 5)

_ այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում՝ ՀՀ -ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

_ ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ

_ հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն անբողջական չէ կամ առկան են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.04.2013թվականի (խմբագրությամբ՝ 15.04.2021թվականի N 28–Ն) հրամանով հաստատված կարգով՝ 15.09.2022թվականից 30.09.2022թվականը ներառյալ բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թվականի հոկտեմբերի 4– ին, ժամը 13^{00} –ին ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք,Լուսակերտ բնակավայր,6փ.5շ.:

Տեղեկությունների համար զանգահարել 098355450

ՀՀ Շիրակի մարզի «Լուսակերտի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ս.Սահակյան